ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԱՅՔ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918 որոշման դրույթներով կազմված հողաշինարարական գործի նյութերով՝ նախատեսվում է ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Գորայք բնակավայրում իրականացնել «Որոտան-Հիդրո» ՍՊԸ-ի կողմից ՓՀԵԿ-ի ներկայումս իրականացվող շինարարական աշխատանքների ընդլայնում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՓՀԵԿ-ի ընդլայնումը համայնքում կապահովվի շուրջ 2 միլիարդ ՀՀ դրամի նախատեսվող ներդրումներ և կստեղծվի թվով 8-10 աշխատատեղ, ուստի ՓՀԵԿ-ի ընդլայնման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Գորայք բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության՝ արոտավայր գործառնական նշանակության 0.09787հա (ծածկ.՝ 09-028-0311-0001) և գյուղատնտեսական նպատակային նշանակության՝ այլ հողատեսք գործառնական նշանակության 0.03295հա (ծածկ.՝ 09-028-0303-0004) հողամասերը փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության էներգետիկայի գործառնական նշանակության հողերի:

Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության
բաժնի առաջատար մասնագետ՝ Վ.Խաչատրյան

28.08.2023թ

ՏԵՂԵԿԱՆՔ

Սիսիանի համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունումից հետո համայնքային բյուջեի ծախսային մասում փոփոխություն չի կատարվի:

Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության
բաժնի առաջատար մասնագետ՝ Վ.Խաչատրյան

28.08.2023թ